ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Գրականության ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը ստեղծվել է 1943 թ., ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտի հիմքի վրա:

Ինստիտուտում կատարվող աշխատանքների հիմնական ուղղություններն են. հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն, նոր գրականության պատմություն, սովետահայ գրականության պատմություն, հայ դասական գրողների երկերի գիտական հրատարակություն, գրականության տեսություն և գրական կապեր: Բանահյուսությունը նույնպես գրականության ինստիտուտում ուսումնասիրվող բնագավառներից է եղել երկար տարիներ և այժմ էլ այդ ուղղությամբ լուրջ աշխատանք է կատարվում: Ինստիտուտում ուսումնասիրվել է նաև հայ պարբերական մամուլի պատմությունը:

Հայ գրականագիտությունը մինչև սովետական տարիները և սովետական շրջանում մինչև գրականության ինստիտուտի ստեղծումը անցել էր հարուստ ուղի: Հրապարակի վրա էին Մ. Աբեղյանի հետազոտությունները, Լեոյի, Վրթ. Փափազյանի, Ստ. Պալասանյանի հայ գրականության պատմությունները: Հայ գրականության տարբեր հարցերին և առանձին գրողների ստեղծագործություններին նվիրված լուրջ հետազոտություններով հանդես էին եկել Ա. Տերտերյանը, Յ. Խանգաղյանը, Հ. Սուրխաթյանը, Ա. Կուրինյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ: Բայց Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ստեղծումից հետո է միայն, որ հնարավոր դարձավ հայ գրականության բոլոր կարևոր իրողությունների ծրագրված ուսումնասիրությունը:

Գրականության ինստիտուտում ծավալված հետազոտությունների նպատակը հայ գրականության զարգացման օրինաչափությունների բացահայտումն է, նրա բազմակողմանի աղերսների և առանձնահատկությունների վերհանումը: Գրականության տարբեր շրջանների ու տարբեր երևույթների բնույթն էլ թելադրում է, թե աշխատանքներն ի՛նչ տիպի են լինելու. բանասիրական-գրագիտական, թե՞ տեսական-գրականագիտական, մենագրություններ առանձին գրողների մասին, թե՞ ժամանակաշրջանի գրական երևույթներին նվիրված ուսումնասիրություններ, անհատական, թե՞ կոլեկտիվ գործեր:

Գրականության ինստիտուտի առաջին հրատարակություններից են եղել «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի պատումները՝ երեք հատորով: Այնուհետև՝ տարբեր տարիներում լույս են տեսել «Սասնա ծռերի» համահավաք բնագիրը՝ հայերեն և ռուսերեն, Հ. Օրբելու «Միջնադարյան Հայաստանի աուսկները» և «Հայկական հերոսական էպոսը», Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր, հայրենիներ և անտունիներ»: Հայկական բանահյուսության ուսումնասիրության և բնագրերի հրատարակման գործը ինստիտուտում շարունակվում է առ այսօր, լույս են տեսել Ա. Ղանալանյանի «Առածանին» և «Ավանդապատումը»: Այժմ Ս. Ղևոնդյանը պատրաստում է «Հայկական ժողովրդական մանր երգիծապատումները»:

Հայ հին և միջնադարյան գրականության ուսումնասիրության ուղղությամբ Ինստիտուտում կատարվող աշխատանքների սկիզբը հանդիսացավ Մա-

նուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» երկհատորյակը: Ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի աշխատանքները երկար տարիներ ընթացել են բանասիրական և բնագրերի հրատարակության պատրաստման ուղղությամբ, մատենաշարով լույս են տեսել հայ միջնադարյան հեղինակների ստեղծագործությունները (Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Երզնկացի, Կոստանդին Երզնկացի, Հովհաննես Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Մարտիրոս Արիմեցի, Մկրտիչ Նաղաշ):

Դրական հուշարձանների ճշգրիտ բնագրերի հրատարակությունը այժմ էլ բաժնի կարևոր խնդիրներից է: Սկսված է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ճշգրիտ բնագրի պատրաստման գործը:

Ուսումնասիրվում են հունական, ասորական, վրացական և իրանական գրականությունների հետ հայ գրականության աղերսները:

Բաժնի աշխատանքների մեջ սկսում են կարևոր տեղ գրավել հին և միջնադարյան հայկական գեղարվեստական արձակի ու չափածոյի գրականագիտական ուսումնասիրությունը, ավանդույթների զարգացման, ժանրային առանձնահատկությունների ու գեղարվեստական ոճի խնդիրների բացահայտումը, որը հնարավորություն կտա հայկական գեղարվեստական գրականության հին և միջին դարերի օրինաչափությունների ավելի ամբողջական ու հիշտ ըմբռնման:

Հայ նոր գրականության բաժնի աշխատանքները ընթանում են ինչպես դասական գրողների կյանքի ու ստեղծագործությունների բազմակողմանի ուսումնասիրության, այնպես էլ գրական մեթոդների ու դպրոցների առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ: Հրատարակվել են Խ. Աբովյանին, Հ. Թումանյանին, Վրթ. Փափազյանին, Րաֆֆուն, Լ. Բաշալյանին, Տիգրան Կամսարականին, Թլկատինցուն և դասական այլ գրողներին նվիրված մենագրություններ, լույս է տեսել «Հայկական ռոմանտիզմ» ուսումնասիրությունը: Բաժնի կարևոր գործերից մեկը «Հայ նոր գրականության պատմության» հիմնհատորյակն է, որի 3 հատորները արդեն լույս են տեսել, իսկ 4-րդ հատորի տպագրությունը ընթացքի մեջ է: Սկսված է 19-րդ դարի ճնշադատական մտքի պատմության ուսումնասիրությունը:

Արդի ժամանակաշրջանի հայ գրականության զարգացման օրինաչափությունները ուսումնասիրվում են սովետահայ գրականության բաժնում: Այստեղ նույնպես առանձին հեղինակների նվիրված մենագրական գործերին զուգընթաց (Ակսել Բակունց, Ստեփան Զորյան, Դերենիկ Դեմիրճյան) ճնշության են առնվում առանձին գրականագիտական պրոբլեմներ, ինչպես «Կուսակցականության լենինյան ուսմունքը և հայ գրականագիտությունը», «20—30-ական թվականների հայ ճնշադատական միտքը», «Սոցիալիստական ռեալիզմի սկզբնավորումը և ձևավորումը» սովետահայ արձակի և բանաստեղծության կարևոր հարցերը:

Լույս են տեսել Սովետահայ գրականության պատմության երկհատորյակը (հայերեն) և միհատորյակը (ռուսերեն, Մոսկվայում, պատրաստված Մ. Դորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ):

Այս բաժինն է պատրաստել և իրականացրել Եղիշե Չարենցի երկերի գիտական հրատարակությունը (6 հատորով), այժմ պատրաստվում է Ակսել Բակունցի երկերի նույնատիպ հրատարակությունը 4 հատորով:

Գրականության ինստիտուտում կատարվում են սվյուտճայ գրականության ուսումնասիրման առաջին քայլերը:

Մարքս-Լենինյան գրականագիտությունը և պոետիկայի խնդիրները ինստիտուտի հետազոտական աշխատանքներում կարևոր տեղ են գրավում: Գրականության տեսության հորաստեղծ բաժինը հրատարակության է պատրաստել «Ժամանակակից գրականության ժանրերը» կոլեկտիվ մենագրությունը:

Ինստիտուտի աշխատանքի կարևոր բնագավառներից մեկը հայ դասական գրողների երկերի գիտական հրատարակությունն է: Ինստիտուտի մակնիշով լույս են տեսել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Հովհաննիսյանի երկերը, շարունակվում է Հ. Պարոնյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Աբեղյանի երկերի գիտական հրատարակության գործը: Տպագրության ընթացքի մեջ է Պ. Դուրյանի երկերի երկհատորյակը:

Տեքստաբանության բաժինը այժմ հրատարակության է պատրաստում Դ. Դեմիրճյանի երկերը:

Հայ գրականության բազմադարյան կապերը ինչպես ՍՍՀՄ, այնպես էլ արտասահմանյան երկրների գրականությունների հետ չափազանց բազմազան են: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքներից են «Հայ-ռուսական գրական կապերը», «Հայ-բուլղարական գրական կապերը 19-րդ դարում», «Հայ-իրանական գրական առնչությունները», «Հայ-վրացական դրական կապերը 18-րդ դարում», «Վիկտոր Հյուգոն և հայ գրականությունը» ուսումնասիրությունները: Շուտով լույս կտեսնի «Հայ-ուկրաինական գրական կապերը» աշխատությունը: Գրական կապերի բաժնում ուսումնասիրվում է նաև հայագիտության կարգացումը Ռուսաստանում և Եվրոպական երկրներում:

Ինստիտուտի գիտական աշխատակիցներից 10-ը դոկտորներ են, 50-ը՝ գիտության թեկնածուներ:

Ինստիտուտում են կենտրոնացված արվի հայ գրականագիտական մտքի առաջատար ուժերը: Լուրջ աշխատանքներ են տարվում գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Մասնագիտացման հիմնական ձևը ասպիրանտուրան է, իսկ գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող այն անձանց, որոնք այլ հիմնարկներում են, ինստիտուտը անհրաժեշտ գիտական օգնություն է ցույց տալիս, կազմակերպում դիսերտացիաների պաշտպանությունը:

Ինստիտուտը գիտական սերտ կապերի մեջ է Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ: Ինչպես արդեն նշվեց, համատեղ աշխատանքի արդյունք է եղել սովետահայ գրականության պատմության ռուսերեն միհատորյակը: Մ. Գորկու անվան ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստվող համաշխարհային գրականության պատմության 10-հատորյակի հայ հին գրականության բաժինը գրվել է Մ. Աբեղյանի անվան ինստիտուտում, պատրաստվել և Մոսկվա են ուղարկվել «Սասունցի Դավիթ» էպոսի մի քանի պատումների ռուսերեն թարգմանությունները:

Ինստիտուտը ձեռնամուխ է եղել հայ գրականության աչքի ընկնող երկերի ռուսերեն թարգմանությանն և հրատարակության գործին: Լույս են տեսել Մ. Նալբանդյանի երկերը 2 հատորով, տպագրության պրոցեսում է գտնվում Եղիշեի «Պատմությունը»՝ Հ. Օրբելու թարգմանությամբ, հրատարակության են պատրաստվում Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» երկու հատորները և Ա. Ղանալանյանի «Ավանդապատումը»:

Հայ գրական հուշարձանները և հայ գրականագիտական մտքի նվաճումները Սովետական Միության գիտական հասարակայնությանը հասու դարձնելու գործը այսուհետև ևս ինստիտուտի հատուկ ուշադրության է արժանանալու:

Ինստիտուտը պարբերաբար կազմակերպում է գիտական նստաշրջաններ, որոնք հետազոտական աշխատանքների կարևորագույն արդյունքների յուրահատուկ ամփոփումն են:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը՝ հանրապետության հայագիտական կարևոր օջախներից մեկը, որն իր շուրջն է համախմբել նաև ինստիտուտից դուրս գտնվող լավագույն գրականագետներին, հետազոտում է հայ գրականության հարուստ գանձարանը և բացահայտում նրա զարգացման օրինաչափությունները:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Վ. ՉԱՐՅԱՆ

Արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստաբանության դոկտոր

Արվեստի ինստիտուտը ստեղծվել է 1958-ին:

Ինստիտուտին նախորդել է արվեստների պատմության և տեսության սեկտորը, որի հիմքի վրա էլ կազմակերպվել է մեր ինստիտուտը:

Իր հիմնադրման պահին ինստիտուտն ուներ ընդամենը 18 աշխատակից, հիմա՝ 86: Ինստիտուտի գոյության առաջին տարիներին գործում էին հետևյալ բաժինները. երաժշտության (բաժնի վարիչ՝ նախ Մ. Մուրադյան, հետո Գ. Գյոդակյան), ճարտարապետության (բաժնի վարիչ՝ Ալ. Սահինյան), թատրոնի ու կինոյի (նախ՝ Ռ. Ջարյան, հետո՝ Գ. Ստեփանյան, հիմա՝ Լ. Հախվերդյան) և կերպարվեստի (նախ՝ Ռ. Դրամբյան, հետո՝ Ռ. Պարսամյան, հիմա՝ Սա. Մնացականյան): Հետագայում ավելացան նաև կիրառական արվեստների (1959, բաժնի վարիչ՝ նախ՝ Ս. Դավթյան, հետո՝ Ռ. Դրամբյան, հիմա՝ Մ. Ղազարյան), մշակութային առնչությունների (1966, բաժնի վարիչ Գ. Հովնան), ժողովրդական երաժշտության (1967, բաժնի վարիչ՝ Մ. Մուրադյան): Եվ սրանց կողքին՝ շեֆսպիրագիտության հայկական կենտրոն (ղեկավար՝ Ռ. Ջարյան): Մի խոսքով՝ 8 բաժին:

Ինստիտուտում աշխատում են գիտությունների 7 դոկտոր և 34 թեկնածու: Այստեղ են աշխատել արվեստաբանական մտքի ավագ սերնդի ներկայացուցիչներ՝ Քրիստափոր Քուշնարյանը (1890—1960), Լիդիա Դուրնովոն (1885—1963), Մուշեղ Աղայանը (1888—1966), Վահրամ Թերզիբաշյանը (1898—1964) և Վահրամ Փափազյանը (1888—1968):

Ինստիտուտի գիտական գործունեությունն ընթանում է հետևյալ հիմնական ուղղություններով.

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԲԱԶՄԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: Պետք է ասել, որ արվեստի տարբեր բնագավառների պատմությունը գրելու անդրանիկ քայլն արել է ինստիտուտը: Անշուշտ ծանր մի գործ, քանի որ նախ՝ ոչ մի նախափորձ չկար: Երկրորդ՝ բազմաթիվ նոր նյութեր էին կուտակվել վերջին չորս-հինգ տասնամյակի ընթացքում և ժամանակ էր հարկավոր, որ դրանք